ՀՈՒՆԱՀԱՅ «ԵՐԿՈՒՆՔ», «ՆՈՐ ԱԼԻՔ», «ԱՐԱՐԱՏ» ԹԵՐԹԵՐԸ

Է. Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հունահայ պարբերական մամուլի ավելի քան մեկդարյա պատմությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ սկզբնավորումից (1891 թ.) մինչև 1922 թ. ընկած ժամանակաշրջանը և հետո։ Այս ժամանակագրական բաժանումն ավելի շատ առնչվում է հունահայ գաղթօջախ կազմավորման և զարգացման առանձնահատկություններին, նրա պատմությանը։ Մինչև 1920 թ. հունահայ զանգվածը լինելով քանակապես փոքր (ըստ որոշ աղբյուրների՝ հազիվ մեկ տասնյակ հազար)[1], ցրված էր Հունաստանի տարբեր վայրերում և ազգային, հասարակական-քաղաքական, մշակութային հավաքական կյանքի կազմակերպման տեսակետից մի ամբողջություն չէր ներկայացնում։ Նրա առանձին հատվածներն ապրում էին իրենց ուրույն, առանձնակի կյանքով։ XIX դ. 90-ական թվականներին Թուրքիայում տեղի ունեցած դեպքերի (Գում-Գափուի, Բաբը Ալիի, Բանկ Օտոմանի իրադարձություններ) հետևանքով գաղթօջախում հայ բնակչության տեղաշարժերը միայն ժամանակավոր աշխուժություն էին մտցնում, հաճախ ոչ մի հետք չթողնելով նրա կյանքում։ Միայն 1921—1922 թթ. Կիլիկիայից, Զմյուռնիայից և Արևելյան Թրակիայի շրջաններից կատարված զանգվածային ներգաղթն էր, որ արմատապես փոխեց գաղթօջախի դեմքը, սկիզբ դնելով քանակապես և որակապես տարբեր մի միավորի կազմավորմանը։ Տարբեր կուսակցությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մտավորական գործիչների մուտքը Հունաստան ձևավորեց այն ընդհանուր քաղաքական, մշակութային և հոգևոր մթնոլորտը, որն արդեն 1920-ական թվականների սկզբներին գաղթօջախի ազգային հավաքական կյանքի կազմակերպման հիմքը դարձավ։ Որակական նման տեղաշարժերն էլ սկիզբ դրեցին գաղթօջախի մամուլի պատմության երկրորդ կարևորագույն փուլին։

Հունահայ պարբերական մամուլը գաղթօջախի զարգացման այս առանձնահատկությունները լիապես արտացոլեց և՛ քանակական, և՛ որակական առումով։ Այսպես՝ 1891—1922 թթ. լույս տեսավ ընդամենը 8 անուն պարբերական, իսկ 1922—1930 թթ.՝ 30 անուն։ Քանակական այս թռիչքն էլ իր հետ բերեց որակական նոր ցուցանիշ։ Եթե 1890-ական թվականներին Աթենքում հնչակյան գործիչների հրատարակած պարբերական մամուլը հիմնականում կարելի էր համարել հունահայ գաղթօջախում լույս տեսած կուսակցական մամուլ, ապա 1920-ական թվականներինը, անկախ կուսակցական պատկանելությունից, որակվում էր որպես գաղութահայ, հունահայ մամուլ։

Հունահայ գաղթօջախի պատմության հիշյալ փուլում առաջին պարբերականը, հնչակյան ուղղության «Երկունք» թերթն էր (Աթենք, 1922 թ. հոկտեմբեր—1923 թ. հուլիս)։

Հիրավի, շնորհակալ նախաձեռնություն էր այդ տարիներին հայերեն պարբերականի հրատարակությունը Հունաստանի նման մի երկրում, որը գտնվելով տնտեսապես ծանր վիճակում, այնուամենայնիվ, ընդունել էր մեկ միլիոնից ավել հույն և հայ գաղթականների։ Գնահատանքի էր արժանի նման պայմաններում հունահայ մտավորականության վճռականությունը.

---

1 ՀՀ Նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 178, ց. 1, գ. 241, թ. 47։

«Երբեք մի զարմանաք,—գրում է Նյու Յորքի «Երիտասարդ Հայաստան» թերթը,—երբ ըսեմ, թե քաղցի ու ցուրտի, դժվարության և դժբաղդության տակ կքած Աթենքի և Փիրեյի մեր փախստական ընկերները այս վայրկյանիս իրենց ձեռք բերած սենթերով ու անձնական ջանքերով սկսած էին հրատարակել ջանալ «Երկունք» թերթը։ Մեզի մոտիկ հույները լեղունին խածած կապշեին հայոց այս ձեռնարկին հանդեպ»[2]։

«Երկունքի» հրատարակությունն իրականացավ ձախ հնչակյան գործիչներ Հարություն Գասպարյանի, Արիս Գալֆայանի և Իգնատիոս Սուքիասյանի անհատական նախաձեռնությամբ ու ջանքերով։ Խմբագիրն էր Հ. Գասպարյանը։ Նա ուներ լրագրական-խմբագրական աշխատանքի հարուստ փորձ։ Թիֆլիսի «Հայրենիք» թերթում եղել էր խմբագիր[3], աշխատակցել էր «Մշակին»։

«Երկունք» թերթի բոլոր խմբագրականները պատկանում են Հ. Գասպարյանի գրչին։ Նրա գրական կեղծանուններից է «Արտեմիուսը», որով ստորագրված են «Երկունքում» տպագրված մի քանի հոդված։

Հրատարակիչներ Արիս Գալֆայանը (բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ուսուցիչ և ապա՝ հոգևորական) և Իգնատիոս Սուքիասյանը (մասնագիտությամբ ուսուցիչ), նույնպես ունեին լրագրական աշխատանքի հմտություն և պարբերաթերթի հրատարակության հետ կապված դժվարությունները հաղթահարելուց զատ նաև աշխատակցում էին թերթին։

«Երկունքի» աշխատակիցների ցանկը մեծ չէ։ Թերթում տպագրվել են Ա. Նազարբեկը, Ս. Սապուհ-Գյուլյանը, Բ. Սյունիքը, հանդես են եկել նաև մտավորականներ, արհեստավորներ, բանվորներ։ Թերթն ընդգրկում էր հայ կյանքի տարբեր բնագավառներն արտացոլող նյութեր, նաև ազդեր և հայտարարություններ։ Նյութերի մեջ բազմազանություն և աշխուժություն էին մտցնում նամակներն ու թղթակցությունները, մամուլից առնված նյութերը։

Հրատարակվելով հնչակյան գործիչների կողմից, «Երկունքը», բնականաբար, պաշտպանում էր հնչակյան գաղափարախոսության սկզբունքները։ Այն ավելի քան ակնհայտ է «Մեր հավատամքը» ծրագրային հոդվածում, ուր Հ. Գասպարյանը գրում է. «Երկունքը» հանդիսանում է աշխատավորության, ընդ որում հայ ընչազուրկ դասակարգի շահերի և նրա հետապնդած գաղափարների անկաշառ և անարծաթ թարգմանն ու փաստաբանը» և որ «Երկունքը» ոգի ի բռին պիտի ջանա պաշտպանել զրկվածների և թույլերի շահերը Հունաստանի հեղափոխական կառավարության առջև»[4]։

«Երկունքի» բերած նորությունը և գնահատելի արժանիքը պետք է տեսնել Խորհրդային Հայաստանի նկատմամբ նրա ունեցած դիրքորոշման մեջ։ Քանի որ Հայաստանում սոցիալիստական կարգերի հաստատումը համապատասխանում էր Հնչակյան կուսակցության նպատակներին, հնչակյանները դրականորեն էին վերաբերվում այդ փաստին։ «Երկունքը» ևս առաջին իսկ համարներից իր հայացքը դարձրեց դեպի Խորհրդային Հայաստան։ Հ. Գասպարյանը արժեքավորելով և գնահատելով «սեփական ազատ հայրենիքի» գոյության փաստը, Խորհրդային Հայաստանը համարում էր «տակավին երկունք ապրող ապագա ամբողջացյալ և ընդարձակյալ հայրենիքի... կորիզը»[5]։ Նկատենք, որ սա Հնչակյան կուսակցության ազգային քաղաքականության բնորոշ մի գիծ էր։

Թերթը նաև խորհրդային հայրենիքին օգնելու և սատար կանգնելու կոչ էր անում։

«Երկունքն» ի սկզբանե ուներ խորհրդային կողմնորոշում, և դրանով էլ պայմանավորվում էր թերթի գործունեության ողջ ընթացքը, նյութերի բո-

---

2 Երկունք, 31. XII. 1922։

3 Նույն տեղում, 24. VI. 1923։

4 Նույն տեղում, 22. X. 1922։

5 Նույն տեղում, 22. X. 1922։

վանգակությունը։ Թերթը դատապարտում է հայ «անասուն» դիվանագետների ձախավեր գործունեությունը, «եվրոպական ծախված դիվանագիտության» վարած «վնասակար քաղաքականությունը»։ Այժմ ի՞նչ նոր ուղիներ էր առաջարկում թերթը և ի՞նչ քաղաքականություն պետք է որդեգրեր հայ գաղթականությունն իր իսկ շահերից ելնելով։ Միակ և ճիշտ ուղին նա համարում էր շրջադարձը դեպի նորաստեղծ Խորհրդային Հայաստան։

«Երկունքի» քաղաքական կողմնորոշումն ավելի պարզորոշ է դառնում, երբ քննարկվում է նրա վերաբերմունքը այսպես կոչված «ազգային օջախի» հանդեպ։ Թերթի հրատարակումը մոտավորապես համընկավ Լոզանի կոնֆերանսի գումարման ժամանակաշրջանին, և «Երկունքը» նրա աշխատանքներին անդրադարձավ խմբագրականներով, հոդվածներով ու արտատպություններով։ Նրա տեսակետն այս հարցում մեկն էր՝ «Խ. Հայաստանն հայերու «ազգային տունն» է»։ Պատմության դառը փորձը հուշում է թերահավատությամբ վերաբերվել Ազգերի լիգայի և Լոզանի կոնֆերանսի նստաշրջաններում Հայկական հարցի և «ազգային օջախի» մասին տրված որոշումներին։ Դեռևս Լոզանի կոնֆերանսից առաջ Հ. Գասպարյանն իրատեսորեն գրում էր. «Ահա պատմական իրա մըն ալ, որ կերթա ավելնալ հիներուն վրա։ Սնամեջ որոշումներուն չենք հավատար...»[6]։

Հնչակյան գաղափարախոսության համար հատկանշական է Ա. Նազարբեկի «Ազգային օջախ» հոդվածը։ Ուշագրավ է, որ երբ հայ մյուս կուսակցությունները այն դիտում են որպես անջատ թուրքահայ դատ, Ա. Նազարբեկն իրավացիորեն պնդում, բացատրում է նրա համազգային բնույթը, քանզի «ազատագրված Հայաստանը իրավապես այն միակ կազմակերպված հայ քաղաքական մարմինն է, որի իրավասությունն ըստ ինքյան տարածվում է ամբողջ հայ ժողովրդին վերաբերյալ խնդիրների լուծման վրա...»[7]։ Ա. Նազարբեկը նաև վախ է հայտնում, որ «ազգային օջախ» ստեղծմամբ չեզոքանում, չքանում է «Հայաստանի ամբողջացման պատմական, իրավական ու իրական նշանակությունն ու կշիռը»։ Ինչպես երևում է, հնչակյան կուսակցության «ազգային օջախին» դեմ լինելու հիմնական կռվաններից և փաստարկներից մեկն այն է, որ այն չի լուծում և չի կարող լուծել «թրքական լծի տակ դեռ գտնված հայ հողամասերի ազատագրման ու նրանց միացման խնդիրը Հայաստանի ազատագրված մասի հետ»[8]։

«Երկունքը» սփյուռքահայ այն պարբերականներից էր, որոնք իրենց սկզբնավորման օրվանից իսկ պրոպագանդեցին գաղութահայության համար կենսականորեն կարևոր հայրենադարձության հարցը։ 1922 թ. հոկտեմբեր-նոյեմբերին, երբ Հունաստանը դեռ շարունակում էր զանգվածաբար գաղթականներ ընդունել, «Երկունքն» իր գործունեությունը ծավալում էր միայն մի նշանաբանով՝ «Դեպի հայրենիք»։ Թերթին մտահոգություն էին պատճառում հունահայ գաղթականության և որբերի թշվառ վիճակը, նրանց ապագայի, ֆիզիկական գոյության և ազգային ինքնության պահպանման հարցերը։ «Երկունքը» դեմ էր նաև հայ գաղթական զանգվածների՝ Ամերիկա և այլուր ցրվելուն։ Նրա կարծիքով՝ «ազգային գոյության պահպանության տեսակետեն վերցրած»[9] ամենևին էլ ցանկալի չէր այս նոր գաղթը։ Թերթը հարց էր բարձրացնում ազգային մարմինների առջև և առաջարկում դիմել խորհրդային կառավարությանը՝ ներգաղթի թույլտվության խնդրանքով։ Տպագրվել են նաև Հայաստան ներգաղթել ցանկացող հունահայերի նամակները։ Նմանօրինակ փաստերն ապացուցում են, որ գաղութահայության մեջ հետաքրքրությունը դեպի Խորհրդային Հայաստան և հայրենադարձության շար-

---

6 Նույն տեղում, 26. X. 1922։
7 Նույն տեղում, 3. XII. 1922։
8 Նույն տեղում, 18. I. 1923։
9 Նույն տեղում, 9. XI. 1922։

ժումը ծայր է առել Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հենց առաջին տարիներից։

Պարբերաթերթում գգալի տեղ են գրավում գաղթօջախի տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային և կրթական կյանքը լուսաբանող հոդվածները, հաճախ կարճառոտ, մի քանի տող պարունակող տեղեկությունները, լուրերն ու թղթակցությունները, որոնք լրիվ պատկերացում են տալիս գաղթականության դժնդակ վիճակի, որբերի կյանքի մասին։ Տպագրված ազդերն ու հայտարարությունները ևս ցույց են տալիս, որ գաղթօջախի աղգային, հասարակական կյանքը բնականոն զարգացում է ապրում։ Նյութերի այս ամբողջությունը տալիս է հունահայ գաղթականության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի այդ տարիների մանրամասն տարեգրությունը։

«Երկունքի» էջերում չեն անտեսվում նաև գրական նյութերը։ Տպագրվել են Հայնեի «Շլեզվիգի ջուլհակները» և Արամ Ջեվիզի «Ամանոր» բանաստեղծությունները։ Հ. Դասպարյանի թարգմանությամբ սկսում է լույս տեսնել ռուս դեմոկրատ գրող Լ. Անդրեևի (1871—1919) «Նահանգապետը» պատմվածքը։ Երգիծանքի միակ նմուշը Հ. Թաթուլի «Պիեռ Լոթիի հրճվանքը» ֆելիետոնն է։ Հասկանալի է, որ թերթի փոքր ծավալը հնարավորություն չէր ընձեռում ավելի մեծ քանակությամբ գրական նյութերի հրատարակման համար, սակայն այն բավարար է պատկերացում կազմելու պարբերականի գրական նախասիրությունների մասին։

Թերևս հրատարակության հետ կապված տեխնիկական ու նյութական դժվարությունները և, ինչպես թերթն է նշում, «խառնակիչ և [illegible] տարրերու կողմե հարուցված խոչընդոտները»[10] ստիպում են [illegible] հայտարարություն տալ 1923 թ. սեպտեմբերից պարբերականի հրատարակությունն արտասահման տեղափոխելու մասին։ Խմբագրության այս մտադրությունը չի իրականանում, և «Երկունքը» դադարում է։

Ժամանակագրական առումով հունահայ ռամկավար ազատական առաջին պարբերականը «Նոր ալիք» օրաթերթն է, որը լույս տեսավ Սալոնիկում, 1924 թ. մարտի 24-ից։

Թերթի ստեղծման պատմությունը սերտորեն առնչվում է դաշնակցական «Ալիք» (1923—1927) օրաթերթի պատմությանը, որի խմբագրական կազմում սկսված գաղափարական տարաձայնությունները ծնունդ տվեցին նոր պարբերականի։ Վեճի առարկան թերթի ուղղությունն էր, և «Ալիքիդ» պառակտված խումբը նոր թերթ հրատարակելով՝ որդեգրում է խիստ ընդգծված հակադաշնակցական ուղղություն և կանգնում խորհրդային Հայաստանի նվաճումների պրոպագանդի դիրքերում։

«Նոր ալիքի» խմբագիրն էր Համբարձում Տեր-Նիկողոսյանը, հրատարակիչը՝ Գրիգոր Մորճիկյանը, արտոնատերը՝ Ժան Էֆթիմիադիսը։

Հ. Տեր-Նիկողոսյանը 1924 թ. Սալոնիկում ՀՕԿ-ի մասնաճյուղի առաջին կազմակերպիչներից մեկն էր, վարչության անդամը։ Ամենայն հավանականությամբ, նա ոչ մի քաղաքական կուսակցության չի պատկանել։ Արխիվային փաստաթղթերում, վարչության անդամների անունների դիմաց երբ նշվում էր կուսակցականությունը, Հ. Տեր-Նիկողոսյանի անվան մոտ գրվում էր՝ «անվերապահ համակրող մը խորհրդային Հայաստանի»[11]։ Հ. Տեր-Նիկողոսյանը, «Նոր ալիքի» խմբագրությունը վարում է մինչև 1924 թ. հուլիսի 1-ը։

Հուլիսի 5-ից «Նոր ալիքի» խմբագրական կազմը փոխվում է։ Նոր խմբագիր Գառնիկ Նավասարդյանի անունը նշվում է հուլիսի 19-ի համարից սկսած։ Այս փոփոխությունը, ինչպես նաև թերթի այն արտահայտությունը, որ այսուհետ ընթերցողներն իրենց հետ «նոր խոսողներ» կունենան, նշանա-

---

10 Նույն տեղում, 24. VI. 1923։

11 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 396, թ. 21։

կում էր, անշուշտ, պարբերականի լիակատար անցումը ռամկավարների տրամադրության տակ։ Ի տարբերություն Հ. Տեր-Նիկողոսյանի, Գ. Նավասարդյանն արդեն համոզված ռամկավար էր։ Նա վարում է թերթի խմբագրությունը մինչև նրա փակվելը։ 1927 թ. հայրենադարձվում է Հայաստան։ Վախճանվում է 1949 թ.[12]։

1924 թ. Հունաստանի Ռամկավար ազատական կուսակցության մասնաճյուղերը ուժեղացնելու նպատակով Աթենք էր տեղափոխվել կուսակցության կենտրոնական վարչությունը՝ իր հայտնի ռամկավար գործիչներով, (Արտակ Դարբինյան, Հովհաննես Պողոսյան, Հրաչ Երվանդ[13], Հրանա Մամուրյան և ուրիշներ), որոնք աշխատակցում էին թերթին։

«Նոր ալիքին» աշխատակցում էին Լ. Թյուրինջյանը Գ. Նավասարդյանը, Հ. Աճեմյանը, Խ. Ծովիկյանը, Պ. Ախիկյանը, Մ. Քեբաբջյանը, Ե. Պտուղյանը, բժիշկ Վ. Մարտիկյանը, Գ. Արծրունին և ուրիշներ։ Տպագրվել են նաև Ա. Ալպոյաճյանը, Վ. Արշարունին և ուրիշներ։ Հատկապես ուշադրություն է գրավում ծածկանունների որոշակի առատությունը։ Մեզ հաջողվեց պարզել դրանց մի մասի տակ թաքնված անձանց ինքնությունը (Հայորդի՝ Հ. Աճեմյան, Քննող և Իրազեկ՝ Գ. Նավասարդյան, Վարդունի կամ Խոսրով Վարդունի՝ Խ. Սայլանճյան, Սարհատ՝ Ստեփան Թապագյան, Ռոզմերի՝ Հ. Ալոճյան, Գեղամ՝ Խ. Խանջյան)։ Թղթակցություններ են տպագրվում նաև սփյուռքի հայաշատ գաղթօջախներից և Խորհրդային Հայաստանից։

Օրաթերթի հրատարակման շարժառիթները և նպատակները հստակորեն տրված են «Մեր ուղին» խմբագրականում։ Այդ շարժառիթները սերտորեն առնչվում են Խորհրդային Հայաստանի գոյության փաստին, գաղութահայության և մայր հայրենիքի փոխհարաբերության հարցերին։ «Հայ հավաքականության գոյության պահպանման խարիսխը կը հանդիսանա Խորհրդային Հայաստան»,—գրում է թերթը։ «Նոր ալիքը» հետամտում էր հայ գաղութը մոտեցնել մայր հայրենիքին, իրազեկ պահել այնտեղ կատարվող ստեղծագործ ու շինարար աշխատանքին։ Խմբագրությունը հայտնում է, թե «պիտի թելադրե այն միջոցները, որոնցմով գաղութի հայությունը պիտի սատարե իր հայրենիքի վերաշինության գործին»[14]։

Թերթում տպագրված նյութերը լայն հնարավորություն են տալիս հենց միայն դրանց հիման վրա բացահայտել Ռամկավար ազատական կուսակցության աշխարհայացքի որոշ կողմեր, վերլուծել նրա որդեգրած ուղղության գաղափարական և քաղաքական ազդակները, դրանց մեջ առանձնացնելով նրան հայրենանպաստ գործունեության մղող մի քանի հիմնական շարժառիթներ։

Իր քաղաքական ուղեգիծը բնորոշելիս, թերթը հաճախ է շեշտում, որ ռամկավարազատականները դեմ են կոմունիստական կարգերին։ Ձգտելով «պետական օրենքներու բարեկարգիչ ճամբով» անհավասարությունը և շահագործումը վերացնել, նրանք պաշտպանում են անհատական նախաձեռնությունը և գտնում, որ «սեփականության իրավունքը այն ազդակն է, որ մարդկությունը հառաջադիմության մը կղե»։ Բայց և այնպես, մի կողմ թողնելով գաղափարական այս տարբերությունները, ընդգծվում է մի հանգամանք, որն ամենահիմնականն է այս կուսակցության դիրքորոշման գործում։ «Մեր դիրքը,—գրում է թերթը «Հայաստան և ռամկավարազատականներ» խմբագրականում,—Հայաստանի հանդեպ չենք ճշդած տեսաբանական կամ սկզբունքային նկատումներով, մեր դիրքը հիմնված է հայ ժողովուրդին գոյության և Հայաստանի ապագային մտահոգության վրա և իբրև այդ մեր տե-

12 Տե՛ս Պ. Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից (1918—1927 թթ.), Երևան, 1965, էջ 94։

13 Տե՛ս Կ. Գևորգյան, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1960, էջ 428։

14 Նոր ալիք, 24. III. 1924։

սակետը ներկա Հայաստանի կառավարության մասին ունի քաղաքական նշանակություն»[15]։

Հայ ժողովրդի գոյատևման և Հայաստանի ապագայի հարցը ընդունելով որպես գլխավոր դրդապատճառ, նշենք այն մյուս շարժառիթները, որոնք մղում են ռամկավարներին՝ օժանդակելու Հայաստանին։ Դրանցից առաջինը «պետական հասկացողությունն» է։ «Մեր աշխարհայացքը» հոդվածաշարում Հրաչ Երվանդը մատնանշում է այս արտահայտության մի էական ու բնորոշ կողմ՝ «ճանչնալ նույն իսկ ամենագեղ կառավարություն մը, որքան ատեն ան իր ձեռքին մեջ ունի երկրին և ժողովուրդին ներքին ու արտաքին գործերուն ճակատագիրը, ճանչնալ կառավարություն մը, երբ անոր հետ վարդապետական հողի վրա գոյություն ունի ամենաբուռն հակառակությունը»[16]։ Հեղինակը չի բացահայտում քաղաքական, տնտեսական, ազգային, բարոյական, հոգեբանական այն ակունքները, որոնք ծնունդ են ավել աշխարհայացքային նման ըմբռնման։

«Պետական հասկացողության» հետ է կապվում նաև «հայրենիք» հասկացության որպես ինքնին այդպիսին ըմբռնումը (Հայաստանը հայի համար հայրենիք է անկախ վարչաձևից)։ Քննադատելով Բ. Քեչյանին, «Նոր ալիքը» «Սխալին դարմանը սխալ չէ» հոդվածում գրում է, որ համաձայն չէ այն տեսակետին, թե «հայրենիքի գաղափարը և ժողովուրդի ընդհանուր և տևական շահերը կը կապվին ներկա վարչության բարոյական ու մշակութային հասկացողություններուն ու փորձություններուն հետ»[17]։ Հեղինակի դատողությունները հիմնված են մի «սահմանավորման» վրա, որը «հայրենիքի» հասկացությունը գերադասում է նրանում տիրող ցանկացած վարչաձևից։

«Այս սահմանավորումը,—գրում է նա,—հայրենիք մը հայրենիք կը պահե, հոն ապրողներուն և դուրսը գտնվողներուն համար, ինչ ալ ըլլա այդ հայրենիքին վարչաձևը»[18]։

Ռամկավարների առջև դրված նպատակներից մեկը հայ ազգի, ազգային կյանքի և մշակույթի զարգացումն է։ Բնականաբար, հարց է առաջանում. կարո՞ղ է արդյոք խորհրդային Հայաստանն իր ներկա վարչաձևի շրջանակներում ապահովել հայ ինքնուրույն մշակույթի և ազգային կյանքի զարգացումը։ Այս տեսակետից բնորոշ է «Նոր ալիքի» 14 համարներում շարունակաբար տպագրված Ա. Դարբինյանի «Հայաստան» Ռամկավար ազատական կուսակցություն և Հ.Հ. դաշնակցություն» վերնագրով հոդվածաշարը։ Հոդվածի համար առիթ են ծառայել Աթենքի «Նոր օր» օրաթերթում տպագրված Ս. Մասուրյանի (Ս. Վրացյան) երկու հոդվածները, ուր քննադատվում են Ռամկավար ազատական կուսակցության աշխարհայացքի և գործունեության որոշ կողմեր։ Պատասխանելով դաշնակցական թերթի քննադատություններին, Ա. Դարբինյանը գրում է. «Ի՞նչ է Ռ. Ա. կուսակցության նպատակը։ Հայերու միությունը իրենց ազգային դրոշի տակ, հայ ազգային կյանքի բարգավաճումը աստիճանական վերելքով դեպի կյանքի լավագույն ձևերը։ Անկախությունը նպատակ չէ, այլ միջոցներեն մեկը ազգի մը համար դեպի քաղաքական, տնտեսական և ընկերային ազատության վերելքները»[19]։ Այնքան էլ խիստ չէին ռամկավարների պահանջները այս խնդրում. անկախ կամ ինքնավար Հայաստան, «միացյալ կամ ոչ, նույնիսկ ուրիշի մը հոգատարության տակ, թեկուզ իբր ազգային տուն», որը հնարավորություն կտար զարգացնելու հայ ազգային կյանքն ու մշակույթը։

Հրաժարո՞ւմ էր սա ազգային անկախության գաղափարից։ Ո՛չ, իրատեսություն էր. այսպես է բնորոշում իր քաղաքական շրջադարձը ռամկավար ազատական կուսակցությունը։

15 Նույն տեղում, 24. XII. 1924։

16 Նույն տեղում, 21. VIII. 1924։

17 Նույն տեղում, 15. VII. 1924։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, 13. VII. 1924։

Թերթը դտնում էր, որ տվյալ պատմական և քաղաքական իրադրության մեջ Հայաստանի խորհրդայնացումը, նրա կապերը խորհրդային հանրապետությունների հետ բնական հետևանք են աշխարհագրական դիրքի և բխում են նրա տնտեսական ու քաղաքական շահերից։ Այս տեսակետը պաշտպանվում և զարգացվում է այլ հոդվածներում ևս։

Ասենք, որ բազմակողմանիորեն լուսաբանվելով թերթի էջերում, Հայաստանի անկախության հարցը մեծ մասամբ դիտարկվում է ազգային նկարագրի և ոգու, մշակույթի, տնտեսության զարգացման համար ընձեռած տեսանկյունից, որը ըստ թերթի, նախապայման է քաղաքական ինքնուրույնության համար։ Այստեղից էլ՝ Ռամկավար ազատական կուսակցության Հայաստանին օժանդակելու մի ազդակ ևս, որը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. հայկական պետականությունը ներկա վարչաձևի պայմաններում քաղաքական և տնտեսական բոլոր նախադրյալներն ունի ապահովելու հայ ժողովրդի՝ որպես ազգային հավաքականության, տնտեսական, քաղաքական, մշակութային և ազգային կյանքի անվերապահ զարգացումը։

Ռամկավար ազատական կուսակցության՝ Հայաստանին օժանդակելու հիմնական շարժառիթներից է նաև այն, որ Հայաստանի տնտեսական զարգացումը պայմաններ է ստեղծում հայ գաղթականության համահավաքման համար և այդպիսով դառնում ազգապահպանման վճռական գործոն։ Այս կետի կարևորությունը նկատի առնելով, «Խորհր. Հայաստանի տնտեսական վերականգնումը» խմբագրականում թերթը գրում է. «Գաղութներու քաղաքական կյանքի շահագրգռությունները պետք է սահմանափակվեն մեր մանուկ պետության վերականգնումին համար ընծայելիք աշխատանքներով»[20]։ Ներգաղթը և Հայաստանի տնտեսական զարգացումը երկու փոխկապակցված, մեկը մյուսով պայմանավորված գործոններն են։ Թերթը հայրենի հողի հետ է կապում նաև հայ գաղթականի անհատական և քաղաքական ազատության ձեռքբերումը։

«Նոր ալիքի» գրեթե յուրաքանչյուր համար լի է ներգաղթի, նրա կազմակերպման մասին հոդվածներով, կոչերով, հայտարարություններով։ Նկատելի է, որ ներգաղթին և Խորհրդային Հայաստանին վերաբերող նյութերը հետապնդում են գաղութահայության և Հայաստանի փոխադարձ կապերն ու շահագրգռությունները ամրապնդելու նպատակ։

«Նոր ալիքին» բնորոշ մի տեսակետ է նաև այն, որ ներգաղթը դիտվում է որպես հայրենիքի հզորացումը և քաղաքական ինքնուրույնությունը ապահովելու միջոց։ Այս տեսանկյունից հետաքրքրական է «Անպաշտպանելի թեզ մը» խմբագրականը, որտեղ թերթն առաջ է քաշում «մարդկային անգնահատելի գործոնի» դերը երկրի տնտեսական, ռազմական, քաղաքական, մշակութային զարգացման գործում։ Այն թերթի որոշակի պատասխանն է ժամանակին տարածում գտած այն թեզի, թե իբր «դուրսը ավելի հայ ժողովուրդ կա, քան այսօրվա երկրի սահմաններուն մեջ, և հետևաբար, ավելի գերակշիռ դատը դուրսը գտնվողներունն է»[21]։ Համեմատելով երկրում և արտասահմանում ցրված հայության դերը հայրենիքի բարգավաճման գործում, «Նոր ալիքը» միանգամայն իրավացիորեն կարծում է. «Ժողովուրդի մը քաղաքական ճակատագրի կերտումին և ինքնուրույնության մշակումին համար երկրի մը սահմաններուն մեջ ապրող տասը հոգին ավելի կարժին, քան տարբեր երկիրներու մեջ ցրված հարյուր հոգին»[22]։ Նկատի առնելով, որ սփյուռքահայությունը ոչ միայն չի կարող օգտակար լինել հայրենիքին, այլև ենթակա է անխուսափելի ուծացման վտանգին, թերթը եզրակացնում է. «Հայ ժողովուրդի իմացական և բարոյական ինքնուրույնության մշակումը, իր ամբողջական իմաստով և ազատ համեմատությամբ

20 Նույն տեղում, 27. V. 1924։

21 Նույն տեղում, 9. VIII. 1924։

22 Նույն տեղում։

այլևս հնարավոր է միայն Հայաստանի մեջ, ինչպես իր քաղաքական ճակատագրին զարգացումը հնարավոր է այդ կողմեն»[23]։ Թերթը կոչ է անում օժանդակել Հայաստանին, նրա հետ լինել լավագույն ցանկություններով «նույնիսկ երբ ան սխալներու մեջ ըլլա»։

Այս հոդվածում ի հայտ է գալիս Ռամկավար ազատական կուսակցության՝ Հայաստանին օժանդակելու ևս մեկ, ոչ պակաս կարևոր շարժառիթ՝ Հայաստանի տնտեսական հզորացումը նախադրյալներ է ստեղծում նրա քաղաքական ինքնուրույնության և անկախության համար, որը իր հերթին վրճռական գործոն է հայ դատի հետապնդման և լուծման ճանապարհին։

Ի դեպ, Հայկական հարցին վերաբերող հոդվածներում նկատելի է թերթի խոր հիասթափությունը միջազգային դիվանագիտությունից։ Ժամանակին կարևոր իրադարձություն ներկայացնող Լոզանի խորհրդաժողովը որակվում է «չարաժողով», իսկ Լոզանի հայտնի դաշնագիրը՝ «խորհրդավոր դաշնագիր»։ Այս նույն խորագիրը կրող հոդվածում փորձ է արվում վերլուծել այն քաղաքական և տնտեսական պատճառները, որ արգելում էին խորհրդաժողովին մասնակցած պետություններին՝ վավերացնել դաշնագիրը։ «Նոր ալիքը» սպասելիքներ չուներ ո՛չ Լոզանի խորհրդաժողովից, ո՛չ էլ Ազգերի ընկերակցությունից և նկատելով, որ միջազգային դիվանագիտությունը «Հայկական հարցի անունով նոր էջ մը բանալու ո՛չ կամք, ո՛չ տրամադրություն, ո՛չ ալ մտադրություն ունի»[24], Հայկական հարցի լուծման ուղիներ որոնելիս, բնականաբար, պետք է հաշվի առներ միակ իրական հնարավորությունը՝ Խորհրդային Հայաստանի գոյության փաստը։

Միջազգային դիվանագիտության խաղերից և օտար հայասերների գործունեությունից խոր հիասթափություն են արտահայտում հայասերների միջազգային ընկերակցության՝ 1924 թ. սեպտեմբերին ծնված հրավիրվելիք համագումարին վերաբերող հոդվածները։ Այս համագումարը նպատակ ուներ քննարկել հայ ժողովրդի հիմնահարցերը, որը և տարակուսանքի մեջ է գցում թերթին՝ քննարկման արդյունքների վերաբերյալ, քանզի համոզված է, որ «հայկական ցավերուն համար պակսածը բռնաձևերու, բաղձանքներու և ծրագիրներու չգոյությունը չէ»[25], այլ դրամը և դիվանագիտությունը։ Ի դեպ, «Նոր ալիքը» ամենևին էլ հավանություն չի տալիս հայկական, ավելի ճիշտ՝ համագաղութային համագումար հրավիրելու մտքին, համոզված լինելով, որ այն չի կարող հայ գաղթականների հիմնահարցերի լուծման քիչ թե շատ իրագործելի և իրական ճանապարհ առաջարկել, քանի որ դրանց լուծումը առաջին հերթին կախված է Խորհրդային Հայաստանի կառավարությունից։

Այսպիսով, «Նոր ալիքը» Հայաստանի քաղաքական ապագայի հարցը սկզբունքորեն կապում է ազգապահպանության և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը՝ միայն ու միայն Հայաստանի հետ։

Ռամկավար ազատական կուսակցությանը հայրենանպաստ գործունեության մղող քաղաքական և ազգային շարժառիթների այս համալիրն է, որ իր ամբողջական արտացոլումն է գտել «Նոր ալիքի» էջերում։

Այս նպատակների իրագործման համար ռամկավարները մասնակցում էին սփյուռքահայ իրականության մեջ գոյություն ունեցող այն միակ կազմակերպությանը, որը գործնականորեն կարող էր ձեռնարկել Հայաստանի օգնության գործը։ Դա Հայաստանի օգնության կոմիտեն էր (ՀՕԿ), որի մասնաճյուղերի ստեղծման նախաձեռնությունը Հունաստանում իրենց ձեռքը վերցրեցին ռամկավարները։

Հունահայ իրականության մեջ «Նոր ալիքը» դարձավ ՀՕԿ-ի աշխատանքների լուսաբանողն ու պրոպագանդողը։ ՀՕԿ-ի աշխատանքի հետ է կապվում նաև ներգաղթի կազմակերպումը, կարևորագույն տեղ է վերապահվում նաև

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, 11. IX. 1924։

25 Նույն տեղում, 12. VIII. 1924։

հայրենիքի և սփյուռքահայության կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը, չի անտեսվում ՀԽԿ-ի բարոյական դերը։ Թերթն առաջ է քաշում ՀԽԿ-ի աշխատանքների բարելավման խնդիրը։ Մասնավորապես ուշադրություն է դարձվում օգնության դործի կազմակերպմանը, բազմակողմանիորեն լուսաբանվում նրա ձևերի և միջոցների հայթայթման հարցը։

Բավականաչափ լայն ընդգրկումով է հանդես գալիս թերթը գաղթօջախի ներքին կյանքը լուսաբանելիս։ Դրանք և՛ ներքին կազմակերպական, և՛ սոցիալ-տնտեսական, և՛ կրթության ու դաստիարակության, և՛ մշակույթի հարցերն են, և հասարակական-քաղաքական, բարեգործական և այլ կազմակերպությունների ու միությունների գործունեությունը, որոնց նկատմամբ շատ հաճախ քննադատական վերաբերմունք է դրսևորվում։ Նկատենք, որ գաղթօջախի կյանքը չի արտացոլվում լոկ շարադրանքով։ «Նոր ալիքն» ակտիվորեն մասնակցում է գաղթօջախի կյանքին, իր սկզբունքային ուրույն դիրքերից ներկայացնելով և մեկնաբանելով երևույթներս ու հարցերը, առաջարկելով, քննարկելով, կարծիքներ փոխանակելով, շատ հաճախ նաև բանավեճի մեջ մտնելով։ Հատկանշական են, մասնավորապես, գաղթօջախի հասարակական-քաղաքական կյանքին, ազգային մարմինների և միությունների գործունեությանը նվիրված խմբագրականները։ Ցուցաբերվող մեծ ուշադրությունը պայմանավորված է նրանով, որ, ըստ թերթի, վերջիններս այն կազմակերպություններն են, որոնք կոչված են պաշտպանելու հայ գաղթականի շահերը, ապահովելու նրան ֆիզիկական գոյության միջոցներ, պահպանելու հայ ազգային հավաքականության անվթար դիմագիծը։

«Նոր ալիքի» էջերում արտացոլվել է գաղթօջախի սոցիալ-տնտեսական կյանքն իր բոլոր կողմերով։ Այն թերթի գրեթե յուրաքանչյուր համարի նյութ է՝ սկսած նկարագրական-ճանաչողական բնույթի հոդվածներից («Տպավորություններ Հին Հունաստանի հայ գաղթականութենեն», «Տպավորություններ Մակեդոնիայեն և Թրակիայեն», «Գողանայի հայերը», «Ցուրտը և հայ գաղթականությունը» և այլն), մինչև գաղթականների նյութական դրությունը բարելավելուն հետամուտ հոդվածներով («Ինչպե՞ս կազմակերպենք խնամատարական գործը», «Մեր գաղթականները» և այլն)։

«Նոր ալիքի» հրատարակման սկզբնական ժամանակաշրջանը համընկավ Հունահայության վրա փլված մի նոր աղետի հետ. 1924 թ. գարնանից սկսած Թրակիայի և Մակեդոնիայի հայ գաղթականների ծրագրավորված բռնի տեղահանությունները իրենց բնակության վայրերից։ Պետք է ասել, որ այս հարցի քննարկման ժամանակ «Նոր ալիքը» հստակորեն տարբերակում էր հույն ժողովրդին կառավարությունից։ Մինչ հունական կառավարությունը քննադատվում էր հայերի նկատմամբ անարդարացիորեն նախկին բարյացակամ վերաբերմունքը փոխելու մեջ, հույն ժողովրդի մասին խոսելիս ջերմությամբ էր հիշվում Փոքր Ասիայում արյամբ և կրակով թրծված եղբայրակցությունը, երախտագիտությամբ նշվում նրա ասպնջականությունը («Երկու բաղդակից ժողովուրդներ», «Հայերը հյուրընկալ Ելլադայի հանդեպ», «Հելլենները և հայերը» և այլն)։ Բնականաբար, խմբագրության ուշադրությունից չէր կարող վրիպել հայերի նկատմամբ հույն ժողովրդի համակրանքի վկայությունները՝ հունական մամուլում տպագրված հոդվածները («Հույները և հայերը», «Հայկական տեղափոխությունը և հելլենական մամուլը», «Հայերու տեղահանության մասին «Բրոկրեի» և «Օրիֆոնի» կարծիքը», «Ինչ կը դրե «Բրոկրե» հայերու տեղահանության մասին» և այլն)։

Պատմական կարևորություն է ներկայացնում Հունաստանի արտաքին գործերի նախարարության ընդհանուր քարտուղար Գ. Արկիրոպուլոսի «Հելլեն կառավարությունը և հայ գաղթականները» խորագրով ուսումնասիրությունը, որտեղ լուսաբանվում է հունական կառավարության պաշտոնական տեսակետը Հունաստանի հայության մասին և նկատառումները տեղահանության հարցում։ Ջեռնպահ մնալով ավելորդ մեկնաբանություններից, «Նոր ալիքը» միշտ արտահայտել է իր սեփական որոշակի տեսակետը։ Տեղահա-

նության բուն պատճառներին անդրադառնալիս թերթն առաջնային չի համարում նյութական գործոնը, այլ բազմիցս նշում է նրա քաղաքական նշանակությունը, գրելով, որ այն Հունաստանի համար «ներքին քաղաքականության հարց է, նոր փոքրամասնություններ չստեղծելու մտավախությունն առաջ եկած կարգադրություն մը»[26]։

Տեղահանությունների առաջն առնելու համար «Նոր ալիքն» առաջարկում է ազգովին սեփական քաղաքականություն մշակել։ Որպես ազգային քաղաքականության գլխավոր ուղեգիծ թերթն առաջ է քաշում հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու հարցը։ Թերթը քննադատում է նաև հայ ազգային մարմիններին՝ հանցագործ անտարբերության և դանդաղաշարժության համար։

«Նոր ալիքի» էջերում աչքաթող չեն արվում գաղթօջախի հոգևոր, մշակութային, կրթական կյանքին առնչվող խնդիրները։ Թերթը կարևորում է «ազգային դիմագծության անվթար, անեղծ պահպանման» անհրաժեշտությունը, ուշադրություն դարձնելով հատկապես երիտասարդ սերնդի, հայ երեխայի հայեցի դաստիարակության հարցին։ Կարևոր դեր է վերապահվում ազգային դպրոցին («Դաստիարակության խնդիրը և կրթական տուրքը», «Կրթական խնդիրներ», «Սելանիկի ազգային վարժարանը» և այլն)։ Որպես այլասերումից և ուծացումից խուսափելու միջոց առաջարկվում է գաղութը համախմբող ազդակների (մշակութային միություններ, կիրակնօրյա դպրոցներ, դասախոսություններ, հանդեսներ, լսարան-ընթերցարաններ) ստեղծումը, որոնք կնպաստեին գաղթօջախի ազգային հավաքական կյանքի աշխուժացմանը։ «Մեր մշակութային կյանքին զարկ տալով միայն,—գրում է թերթը,—պիտի ազատենք հայ գաղութը խորթացումե, և պիտի զգուշացնենք զայն օտարացումե»[27]։ Ազգապահպանման գործում թերթն առաջնային տեղ է հատկացնում նաև հայ գրին ու գրականությանը։

«Նոր ալիքի» գրական բաժնում հիմնականում տպագրվել են ծավալուն գեղարվեստական ստեղծագործություններ, ըստ այդմ էլ, բնականաբար, նախապատվությունը տրվում է տպագրության թերթոնային ձևին։ Ուշադրության է արժանի թերթի 1924 և 1925 թթ. համարներում տպագրված Էմ Թռեմուայի «Սեզար Ուոլթրը» վեպը՝ Երեմիա Պտուղյանի թարգմանությամբ։ Մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար պատմական հետաքրքրություն ներկայացնող նյութեր են «Զորավար Անդրանիկ կը խոսի» և «Զոր. Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914—1916՝ օրագրված զորավարին թիկնապահ զինվորեն» հուշագրությունները։ Թերթը 1925 թ. բացում է իր «Միծաղի անկյունը», ուր Պենտուսցի, Պիծակ, Պարոնյանին ձագը և այլ ստորագրություններով տպագրվում են երգիծական նյութեր։ Տպագրվել են նաև հայ և օտարազգի գրողների ստեղծագործություններից։

«Նոր ալիք» օրաթերթը դադարում է 1927 թ. խմբագիր Գառնիկ Նավասարդյանի ձերբակալման և աքսորի հետևանքով։

Ռամկավար ազատականները 1925 թ. Աթենքում հրատարակեցին իրենց երկրորդ պարբերականը՝ «Արարատ» օրաթերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1925 թ. հունվարի 22-ին։

«Արարատը» խմբագրում էին խմբագրական աշխատանքի մեծ փորձ և կարողություն ունեցող խմբագիրներ, որպիսիք էին Հովհաննես Պողոսյանը, Հրանա Մամուրյանը և Հարություն Դարբինյանը։ Ինչպես նշել ենք, այդ տարիներին Հունաստան էր տեղափոխվել կուսակցության կենտրոնը, որի վարչության անդամ էր Հովհ. Պողոսյանը։ Փաստորեն «Արարատը» հրատարակվում էր որպես կուսակցության պաշտոնական օրգան։

---

26 Նույն տեղում, 26. XII. 1924։

27 Նույն տեղում, 5. IV. 1924։

Բոլոր խմբագիրներն էլ ակտիվորեն աշխատակցում էին թերթին։ «Արարատն» ուներ իր մշտական, մասնավոր թղթակիցները Հունաստանի տարբեր քաղաքներում, Ֆրանսիայում, Լիբանանում, Բուլղարիայում, Եգիպտոսում։ Լողանից պարբերաբար աշխատակցում էր Լևոն Թյուրյունջյանը։ Ուշադրություն են գրավում հատկապես Վան-Միր ստորագրությամբ միջազգային քաղաքական կյանքն ու իրադարձությունները լուսաբանող, տնտեսական, հասարակական, ազգային և այլ հարցեր արծարծող բազմաթիվ հասուն հոդվածներ։ Խորհրդային Հայաստանին և ՀՕԿ-ի աշխատանքներին նվիրված մի քանի հոդվածների տակ գտնում ենք նաև Վ. Մ. Միրաքենց (Միրազենց) ստորագրությունը։ Ենթադրվում է, որ Վան-Միրը և Վ. Մ. Միրաքենցը (Վահան Միրաքյան) նույն անձնավորություններն են։

«Արարատի» առաջին համարը ձեռքի տակ չկա, և հնարավոր չէ իմանալ, թե ինչ առաքելությամբ է իր գործունեությունը սկսում օրաթերթը։ Սակայն թերթի հետագա համարների նյութերը ցույց են տալիս, որ այն չի շեղվում իր կուսակցության ուղեգծից։ «Նոր ալիքում» տպագրված ազդագրերը «Արարատը» ներկայացնում են որպես ժողովրդական օրաթերթ, որը «օրը օրին պիտի հաղորդե իր ընթերցողներուն ազգային կենսական կարևորություն ունեցող լուրերը և մանավանդ Հայաստանի անցուդարձերը»[28]։

Ձեռքի տակ եղած «Արարատի» 98 համարների նյութերը բավարար հիմք են տալիս գնահատելու և արժեքավորելու այն թե՛ որպես Ռամկավար կուսակցության պաշտոնաթերթ և թե՛ որպես հունահայ պարբերական։ Բնականաբար, քաղաքական-գաղափարական ոչ մի տարբերություն չդրսևորելով «Նոր ալիքից»՝ «Արարատը» ևս հետևողականորեն վարում է իր կուսակցության ուղեգիծը։

«Արարատը» իր էջերում ընդգրկում և լուսաբանում էր հիմնահարցերի այն խումբը, որ ծառացած էր հայ ժողովրդի, մասնավորապես սփյուռքահայության առջև։ Դրանք են՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ դիրքորոշման, հայրենիքի օգնության, ներգաղթի, գաղութահայության տնտեսական վիճակի, ազգապահպանության և այլ հարցեր։

«Արարատում» մշտապես լուսաբանվող հիմնական թեման Հայաստանի օգնության գործի պրոպագանդն էր։ Կրկին չանդրադառնալով ռամկավար ազատականների՝ Հայաստանին օգնելու մղող պատճառներին, նշենք, որ թերթն այդ գործին կոչված էր համարում սփյուռքահայության մեջ գործող երեք պաշտոնական կազմակերպությունների՝ ՀՕԿ-ին, Հայաստանի կարմիր խաչին և Հայ բարեգործական ընդհանուր միությանը։ Հայրենիքի օգնության գործը դիտելով ամեն հայի սուրբ պարտականությունը, թերթը քննադատում էր սփյուռքահայության պասիվությունը և հատկապես ունևոր խավի անտարբերությունը։

Վ. Մ. Միրաքենց ստորագրությամբ հրատարակված «Ի՞նչ է ՀՕԿ-ը և ինչո՞ւ պետք է օգնել անոր» հոդվածը յուրովի է մեկնաբանում ՀՕԿ-ի դերը և նշանակությունը։ Այն համարվում է հայ ժողովրդի «ֆիզիքական կյանքում և մտայնության մեջ» կատարված փոփոխությունների հայելին, որ հնարավորություն է տալիս հայ ժողովրդին «գործել ազատ մարդու կեցվածքով և ճգնիլ պատվավոր տեղ մը գրավել ազատ ու իրենց ուժին գիտակից ազգերու շարքերուն մեջ»[29]։ Թերևս հեղինակը նկատի ունի սեփական ուժերով սեփական կարիքները հոգալու ՀՕԿ-ի ձգտումը։ Վ. Միրաքենցը կոչ է անում հայրենիքը սատարել թե՛ նյութապես և թե՛ բարոյապես, քանզի Հայաստանը պետք ունի ոչ միայն առատաձեռն զավակների, այլև ուղղամիտ և ճշմարիտ հայրենակիցների։ Ամեն ինչ ՀՕԿ-ի համար և ՀՕԿ-ը՝ հայրենիքի համար, ահա Վ. Միրաքենցի կարգախոսը։

---

28 Նույն տեղում, 23. I. 1925։

29 Արարատ, 30. I. 1925։

«Արարատը» կոչ է անում չխաչաձևել Հայաստանի օգնության գործը և արտասահմանի կարմիր խաչերը կապել Հայաստանին, քանի որ միայն պետական ազգերը իրավունք ունեն, ըստ միջազգային օրենքների, արտասահմանում կազմակերպություններ ունենալու։

Ինչ վերաբերում է Հայ բարեգործական ընդհանուր միության գործունեությանը, «Արարատը» համամիտ է նրա աշխատանքների բարելավման առաջարկներին, նկատելով, որ այն պետք է լծվի ներգաղթի և հայրենիքի վերաշինության սուրբ գործին։

Ինչպես ամբողջ ռամկավար մամուլը, «Արարատը» ևս բազմաթիվ հոդվածներ և խմբագրականներ է նվիրում Խորհրդային Հայաստանի քաղաքական և տնտեսական կացությանը, նկարագրում այն վերաշինական աշխատանքը, որ կատարվում է երկրի սահմաններից ներս։ Թերթն այսպիսով նպատակ է հետապնդում նախ՝ սերտացնել սփյուռքահայության և Խորհրդային Հայաստանի կապը, դյուրացնել ներգաղթը և երկրորդ՝ օգնել, նպաստել Հայաստանի վերաշինության գործին։

«Արարատը» ևս հավանություն է տալիս Խորհրդային Հայաստանի ռուսական կողմնորոշմանը, ճիշտ քաղաքականություն համարում նրա Խորհրդային Միության կազմի մեջ մտնելը։ Քաղաքական և տնտեսական նման կապերը գիտելով որպես ժողովրդի ապահովության երաշխիք, թերթը միաժամանակ նշում է Հայաստանի ունեցած «ներքին ազատ անկախությունը»։ Այս պայմաններում թերթը արտասահմանի հայության միակ պարտականությունն է համարում Հայաստանը զորացնելուն ուղղված ջանքերը, դեգիրող հայությանը պատսպարելու հնարավորության ստեղծումը, երկրի տնտեսական բարգավաճումը խթանելը, երկիրն այնքան հզորացնելը, որ նա «Ապագա ամեն պատահականության առջև հաջողի կուրծք տալ և մի անգամ ընդմիշտ ընդարձակել իր սահմանները դեպի հարավ ու արևմուտք»[30]։ Այսպիսով, ինչպես «Նոր ալիքը», «Արարատը» ևս Հայաստանի տնտեսապես հզորանալը երաշխիք է համարում ապագայում համազգային հեռահար ծրագրերի իրագործման համար։

Ներգաղթի խնդիրը թերթի հիմնական թեմաներից մեկն էր։ «Արարատը» լուրեր, տեղեկություններ, հոդվածներ էր տպագրում պրոպագանդում ներգաղթը և միաժամանակ ուղիներ որոնում անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման համար։ Ներգաղթի հաջողությունը ևս թերթը կապում էր Հայաստանին նյութական օժանդակություն ցույց տալու և տնտեսությունը վերաշինելու գործի հաջողության հետ։ «Արարատի» կոչերը ՀՕԿ-ին սատարելու վերաբերյալ՝ կոչեր են նաև ներգաղթը դյուրացնելու համար, քանզի ՀՕԿ-ը կոչված է նաև Հայաստանում տեղ պատրաստելու ներգաղթող գաղթականներին։ Հարցերի այս շարքում կենտրոնական տեղ է գրավում մասնավորապես հունահայ կարոտյալ գաղթականների ներգաղթն իրականացնելու խնդիրը։

Ներգաղթը դիտվում է ոչ միայն որպես ազգահավաքման, այլև ազգապահպանման ունիվերսալ միջոց։ «Արարատը» մի կողմից իրավացիորեն մեղադրում է խորհրդային կառավարությանը ներգաղթը ձգձգելու և անտարբերության մեջ, մյուս կողմից՝ պայքարում բոլոր այն կազմակերպությունների դեմ, որոնք օգտվելով հունահայ գաղթականության անորոշ դրությունից, ձգտում էին նրանց տեղափոխել Սիրիա, Ֆրանսիա, Լատինական Ամերիկայի երկրներ։

«Դեպի օտարացում» խմբագրականում թերթն անխուսափելի է համարում արտասահմանյան հայ գաղութների ապագա ուծացումը, եթե նրանք չկապվեն մայր երկրին, չպաշտպանվեն Հայաստանի կառավարության կողմից, մանավանդ «երբ անոնց հայեցի դիմագիծ պահպանելու ջանքերը թուլ-

---

30 Նույն տեղում, 31. I. 1925։

նան կամ չքանան»[31]։ Թերթն այն կարծիքին է, որ «Հայ պետության մը, հայ կառավարության մը հաստատումը պիտի դանդաղեցնե անշուշտ ձուլումի երևույթը մեր գաղութներուն մեջ, իսկ այն պարագային, որ գաղութներու հայերը կրնան ըլլալ հայ քաղաքացիներ, այն ատեն վտանգը ավելի պիտի հեռանա»[32]։ «Արարատը» ցավով է արձանագրում օտար բարքերի ազդեցության տակ հայ գաղթականների ազգային դիմագծի խաթարման և այլասերման փաստերը։ Մի շարք հոդվածներով խմբագրությունն իր խոր մտահոգությունն է հայտնում նաև որբանոցներից դուրս գրվող որբերի հետագա ճակատագրի համար։

Ռամկավար ազատականների՝ Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշումից են բխում նաև հայ իրականության մեջ կուսակցությունների քաղաքական դերի վերագնահատման և նրանց գոյության իրավունքի մասին թերթի տեսակետները։ Նոր իրադրության պայմաններում հայ կուսակցությունների գործունեությունը վերաիմաստավորվում է ելնելով այն տարբերությունից, որ գոյություն ունի անցյալի և ներկայի միջև։ Եթե երեկ նրանց նպատակն ազատագրական պայքարն էր, ապա այսօր այդ գործունեության առանցքը պետք է կազմի «ներկա գոյաձիճակը պահպանելու և քաղաքական պայմաններում ներածին չափով լավագույնին ձգտելու»[33] ճիգը։ Թերթը երկրից դուրս գործող կուսակցությունների քաղաքական գործունեությունը պայմանավորում է Խորհրդային Հայաստանին օժանդակողի ոգով։ Հայ կուսակցությունները «պետք է միշտ աչքի առջև ունենան կացությունը այն ժողովուրդին, որուն մեջ կը գործեն և իրենց գործելու կերպը պատշաճեցնեն անոր...»[34]։ Հայ կուսակցությունների և ազգի բոլոր դասերի սերտ համագործակցությունը թե՛ մայր հողի վրա, թե՛ արտասահմանում հայության ինքնապահպանման համար և Խորհրդային Հայաստանի օժանդակության սուրբ գործին զինվորագրվելը, ահա թերթի առաջարկը և կուսակցությունների գոյության միակ արդարացումը սփյուռքահայ իրականության մեջ։

Շարունակելով հետևել իր կուսակցության ուղեգծին, «Արարատը» բանավիճային հոդվածներ է տպագրել դաշնակցության դեմ։ Մասնավորապես քննադատվում են դաշնակցության վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ, ներգաղթի և Հայաստանի օգնության գործին նրանց ցուցաբերած գործնական մոտեցումները, գաղթօջախի հասարակական, ազգային կյանքում կատարած դերը։

Ինչ վերաբերում է կոմունիստական շարժմանը, թերթը կարծում է, որ «Հունաստան տակավին համայնավարության համար պատշաճ հող չունի»։ Այս տեսակետից էլ մեկնաբանվում են 1925 թ. Հունաստանում բռնկված գործադուլային շարժման հարցերը։

Բազմազան են միջազգային քաղաքական կյանքին և ժամանակի կարևոր իրադարձություններին նվիրված հոդվածները։ Ուշադրություն են գրավում Բալկանյան երկրներին, հատկապես Հունաստանին և հարևանների հետ նրա ունեցած քաղաքական հարաբերություններին վերաբերող նյութերը։ Բազմակողմանիորեն են լուսաբանվում նաև Բուլղարիայի 1925 թ. իրադարձությունները։ Այս առումով հարկ է նշել Վան-Միրի անունը։ Շատ ավելի հրատապություն է ներկայացնում Թուրքիայի ներքին կյանքին, արտաքին հարաբերություններին, Հունաստանի և Թուրքիայի քաղաքական փոխհարաբերություններին առնչվող հարցերի շատ հաճախ սպառիչ լուսաբանումը։ Հետաքրքրական են քրդական ապստամբությանը նվիրված խմբագրական և հեղինակային բազմաթիվ հոդվածները։

---

31 Նույն տեղում, 17. II. 1925։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, 13. II. 1925։

34 Նույն տեղում, 23. II. 1925։

Ակնհայտ է, որ այս հարցի լուսաբանությունը «Արարատի» էջերում հաճախ դուրս է դալիս լրագրային հրապարակախոսության ընդունված սահմաններից և հավակնում մոտենալու դիտական ուսումնասիրության մակարդակին։ Այս տեսակետից նշելի է Հարություն Դարբինյանի «Քյուրտերը և Քյուրտիստան (ներկա ապստամբության առիթով)» ընդարձակ հոդվածաշարը։ Ուշագրավ են հատկապես քրդական ապստամբությանը թերթի տված գնահատականները և ապստամբության քաղաքական պատճառների և շարժիչ ուժերի վերլուծումները։

«Արարատ» օրաթերթի էջերում բնականաբար իր արտացոլումն է գտել նաև ներգաղթային ազգային, հասարակական-քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքն իր բազմակողմանի դրսևորումներով։ Գաղթօջախի ազգային վարչական կազմակերպությունների գործունեության գրեթե ամենօրյա քննարկումները վեր են հանում նրանց աշխատանքների բազմաթիվ թերություններն ու բացասական կողմերը, առաջարկում բարեփոխումների ծրագիր։ Առանձնակի ուշադրություն է նվիրված Հին Հունաստանի գաղթօջախի ազգային կյանքին և 1925 թ. դումարված պատգամավորական ժողովի աշխատանքների լուսաբանությանը։

Տպագրվել են նաև Հունաստանի տարբեր գաղթավայրերի և այլ գաղթօջախների (Եգիպտոս, Բուլղարիա և այլն) գաղթականների կացությունը, սոցիալ-տնտեսական կյանքը պատկերող հոդվածներ։ Գաղութահայ ազգային կյանքի մասին հիմնականում կարճ, տեղեկատվական բնույթի նյութեր են զետեղված «Հայ կյանք» բաժնում։

Համագաղութային, ազգային խնդիրների շարքում «Արարատը» առանձնակի կարևորություն է տալիս Թուրքիայում հայերի լքյալ կալվածքների արժեքների փոխհատուցման և հայերի իրավունքները պաշտպանելու հարցերին։ Հետաքրքրաշարժ են նաև Զմյուռնիայի հրդեհին վերաբերող հոդվածները։

«Արարատը» հրատարակվել է մինչև 1925 թ. հունիսի վերջերը (Մ. Բաբլոյանի կազմած մատենագիտական ցուցակում՝ 1926 թ., որն, անշուշտ, սխալ է)։ Ինչպես նշում է «Ալիքի» նամակագիրը, Ռամկավար ազատական կուսակցությունը Աթենքում «իր գործունեությունը հաշվեհարդարի ենթարկելով», թերթը հանձնում է անհատ ռամկավարներ Հրանտ Մամուրյանին և Հարություն Դարբինյանին, որոնք չկարողանալով ապահովել թերթի ծախսերը, ստիպված դադարեցնում են նրա հրատարակությունը[35]։

Հունահայ նոր գաղթօջախի առաջին պարբերականները հրատարակվելով հայ իրականության մեջ կատարված մեծ փոփոխությունների ժամանակաշրջանում, իրենց էջերում համակողմանիորեն լուսաբանեցին նոր պատմական իրադրության առաջ քաշած կենսական հիմնահարցերի մի համալիր։ Իրենց կուսակցական գաղափարախոսության դիրքերից մեկնաբանելով ազգապահպանության, ներգաղթի, գոյապահպանման, Խորհրդային Հայաստանի և խորհրդային կարգերի նկատմամբ դիրքորոշման խնդիրները, նրանց իրենց բոծունեությամբ նպաստեցին Խորհրդային Հայաստանի և գաղութահայության կապերի ամրապնդմանը և դրանով իսկ՝ ազգապահպանման մեծ գործին։ Այս տեսակետից նշված պարբերականները իրենց արժանի և մնայուն տեղը գրավեցին սփյուռքահայ մամուլի պատմության մեջ։

---

35 Տե՛ս Ալիք (Սալոնիկ), 12. VII. 1925։

АРМЯНСКАЯ ПЕРИОДИКА В ГРЕЦИИ: ГАЗЕТЫ «ЕРКУНК», «НОР АЛИК», «АРАРАТ»

Э. Т. СТЕПАНЯН

Резюме

В 20-е гг. нашего столетия периодическая печать новой армянской колонии Греции откликнулась на все социально-политические проблемы, стоящие перед армянским народом в новую историческую эпоху.

Первая газета гнчакского направления «Еркунк» (Афины, 1922—23) и рамкаварские газеты «Нор алик» (Салоники, 1924—27) и «Арарат» (Афины, 1925) положительно оценили факт установления советского строя в Армении. Однако, если газета «Еркунк» поощряла социалистический строй, то газеты «Нор алик» и «Арарат» рассматривали государственность Армении в качестве гаранта развития ее экономики, культуры, политики.